

**ԽՈՐԵՆ ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆԸ ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳԻՉ (1901–1909 ԹԹ.)**

*Ես մեծությունը գտնում եմ միմիայն խոնարհության մեջ:
Բարձր պաշտոն ունեցող անձնավորությունը մեծ կարող է լինել
միայն այն ժամանակ, երբ մոտ է խոնարհին¹:*

Նորին սրբություն Խորեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս

20-րդ դարի սկիզբը հազեցած էր հայ ժողովրդի ճակատագրին առնչվող պատմաքաղաքական բախտորոշ իրադարձություններով (Առաջին համաշխարհային պատերազմ, Մեծ եղեռն, Հայաստանի Առաջին Հանրապետություն ծնունդ և այլն): Իրար հաջորդող այդ իրադարձությունների ընթացքում ասպարեզ եկան այնպիսի անհատներ, որոնք իրենց անձնվեր գործունեությամբ նպաստ բերեցին հայ ժողովրդի ծանրագույն վիճակն ինչ-որ չափով թեթևացնելու գործին: Նրանց շարքում իր արժանի տեղն ունի Ամենայն Հայոց կաթողիկոսը Խորեն Ա Մուրադբեկյանը²:

Մուրադբեկյանն իր գործունեությունը սկսել է ուսուցչական ասպարեզում: Ուսուցիչ աշխատելու տարիներին շրջելով հայաշատ մի շարք գավառներում (Ղուբա, Նուխի, Ղզլար և այլուր)³, մոտիկից ծանոթանալով ժողովրդի վիճակին ու կարիքներին՝ նա որոշում է եկեղեցական դառնալ և այդ ճանապարհով ծառայել ժո-

¹ Ավազյան Գ., Նահատակ հայրապետը, Երևան, 2008, էջ 63:

² Խորեն Ա Մուրադբեկյանը (աշխարհիկ անունը՝ Ալեքսանդր) ծնվել է Թիֆլիսում 1873 թ. դեկտեմբերի 8-ին՝ Էզրումից գաղթած Հովհաննես Մուրադբեկյանի ընտանիքում: Նախնական և միջնակարգ կրթությունը ստացել է Թիֆլիսի Ներսիսյան ազգային հոգևոր դպրոցում (1883-1892 թթ.), այնուհետև ուսանել Մոսկվայի, Գերմանիայի, Շվեյցարիայի համալսարաններում:

³ ՀԱԱ, ֆ. 319, գ. 310, թ. 2:

ղովրդին⁴: Մբ. Էջմիածնի լուսավորչական հայոց սինդոդի 1901 թ. հունիսի 4-ի որոշմամբ ընդունվում է Մայր Աթոռի միաբանների շարքը, իսկ չորս ամիս անց՝ սեպտեմբերի 25-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի կարգադրությամբ ձեռնադրվում է սարկավագ⁵: Նույն թվականի դեկտեմբերի 17-ին, համաձայն կաթողիկոսի դեկտեմբերի 10-ի կոնդակի, Մևանի վանքի վանահայր Տ. Սարգիս եպիսկոպոս Փիլոյանը նրան ձեռնադրում է կուսակրոն քահանա (աբեղա)՝ անվանակոչելով Խորեն⁶: Մի քանի օր անց՝ դեկտեմբերի 31-ին, նորընծա տեր Խորեն աբեղան նշանակվում է Նոր Բայազետի եկեղեցիների բարեկարգիչ⁷:

Նոր Բայազետի գավառի բնակչության ճնշող մեծամասնությունն անգրագետ էր: Նույնիսկ Նոր Բայազետ քաղաքում չափազանց փոքր թիվ էին կազմում գրագետները: Հատուկեևս էին միջևակարգ կրթություն ստացածները⁸:

Պաշտոնավարման առաջին իսկ օրից Խորեն Մուրադբեկյանը ձեռնամուխ եղավ գավառի հետամնաց կրթամշակութային կյանքի վերափոխմանը: Խնդրի լուծմանը մտահոգ՝ Կովկասի հայոց բարեգործական ընկերության խորհրդին ուղղված դիմումներից մեկում մանրամասն ներկայացնելով գավառում դպրոցական գործի վատթար դրությունը, բնակչության՝ սոցիալական ծանր դրության պատճառով կրթությանն ուշադրություն չհատկացնելը՝ նա՝ համոզմունք էր հայտնում, որ «Գավառի ազգաբնակչության փրկվելու միակ ճանապարհը դպրոցն է, որի անհրաժեշտությունը, դժբախտաբար, դեռ չի հասկացել գավառի

⁴ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, Գիրք Բ. Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (հոգևոր գործունեությունը 1901-1938 թթ.), կազմեց Ս. Բեկբուռյանը, Երևան, 1996, էջ 10:

⁵ Ավագյան Գ., նշվ. աշխ., էջ 16:

⁶ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, Գիրք Բ, էջ 11:

⁷ ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 9809, թ. 9:

⁸ Հայրությունյան Հ., Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ., Երևան, 2008, էջ 230:

ազգաբնակչությունը»⁹: Հետագա շարադրանքում ևս գրում է, որ Նոր Բայազետի գավառը Երևանի նահանգում Ալեքսանդրապոլի գավառից հետո ամենահայաշատ գավառն է, ունի ավելի քան 100 հազար հայ բնակիչ, այնուհետև թվարկում է գավառի վարչական կառուցվածքը, գյուղերի թիվը, բերում է փաստեր՝ ցույց տալով, թե ինչ վիճակում է կրթական գործը գավառում: Պարզվում է, որ Նոր Բայազետ գավառի առաջին մասում՝ Նոր Բայազետի կամ Գեղարքունիքի շրջանում, չնայած 32 գյուղերի առկայությանը, դպրոցներ չկային՝ բացառությամբ մեկի, որը փակվելու վտանգի տակ էր, իսկ Ծաղկաձորի շրջանում 25 գյուղերի դեպքում՝ շրջանն ուներ 7 գործող դպրոց: Խորեն Մուրադբեկյանի վերոհիշյալ ևսմակը կարծես թե ամբողջովին բացահայտում է Նոր Բայազետում տիրող սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը, բնակչության շրջանում տիրող համատարած անգրագիտությունը: Նա ստեղծված վիճակից դուրս գալու, ժողովրդի փրկության միակ ուղին համարում էր դպրոցների վերաբացումը և նորերի հիմնումը, որի համար հայցում էր Կոմկասի հայոց բարեգործական ընկերության օժանդակությունը¹⁰:

Այդ դժվարությունները վերացնելուն էին միտված Խորեն Մուրադբեկյանի՝ Նոր Բայազետի գավառում դպրոցական կյանքի կազմակերպման և զարգացմանն ուղղված ջանքերը: Մուրադբեկյանը ծավալում է աննախընթաց գործունեություն. նրա ջանքերի շնորհիվ կառուցվում է Նոր Բայազետի քարաշեն երկհարկանի երկսեռ ծխական դպրոցը, որի նախագծի հեղինակն ինժեներ Միրզոյանն էր: Շենքը բաղկացած էր երկու մասից՝ տղաների և աղջիկների մասնաշենքերից: Յուրաքանչյուր մասնաշենքի նախահաշիվը 20 հազար ռուբլի էր: Աղջիկների մաս-

⁹ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 300, թ. 7-8:

¹⁰ Նույն տեղում:

նաշենքի շինարարության ծախսի կեսը հանձն առավ նորբայագետցի մեծահարուստ Հայրապետ Խաչատրյանը (Կոլոտ Հայրապետ)՝ պայմանով, որ իր անունը փորագրվի դպրոցի շենքի ճակատին: Իսկ տղաների մասնաշենքը կառուցվեց հանրության ուժերով: Այդ նպատակով Մուրադբեկյանի նախագահությամբ շինարարական մասնաժողովը հանգանակություն իրականացրեց: Հասարակությունն իր հնարավոր նպաստն էր բերում դպրոցաշինությանը: Մուրադբեկյանի ջանքերով, Հայրապետ Խաչատրյանի դրամական օժանդակությամբ և հասարակության հանգանակած դրամական միջոցներով 1902 թ. հուլիսին սկսվեց Նոր Բայազետ քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու վերակառուցումը: Աշխատանքներն ավարտվեցին 1905 թ.: Եկեղեցու օժման արարադությունը կատարեց Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանը¹¹:

Խորեն աբեղա Մուրադբեկյանը շուրջ 2 տարի (1901-1903 թթ.) վարեց Նոր Բայազետի եկեղեցիների բարեկարգչի պաշտոնը: Այդ կարճ ժամանակահատվածում նա իր ծավալած գործունեության շնորհիվ ձեռք բերեց ինչպես տեղի բնակչության, այնպես էլ Ամենայն Հայոց կաթողիկոսի սերն ու համակրանքը: 1902 թ. մարտի 24-ին Վեհափառ Հայրապետի կոնդակով նրան շնորհվեց վարդապետի աստիճան և զավագան կրելու իրավունք, իսկ նույն թվականի հունիսի 19-ին պարգևատրվեց ծաղկյա փիլոնով¹²:

1903 թ. հունիսի 12-ին Նիկոլայ II ցարի ստորագրած օրենքով նախատեսվում էր պետականացնել հայ եկեղեցու կալվածքներն ու գույքը: Արդյունքում՝ փակվում են նաև ծխական դպրոցները: Նոր Բայազետում այդ առթիվ տեղի ունեցավ հակապե-

¹¹ «Մշակ», 24 օգոստոսի 1910, Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 256-258:

¹² ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 378, թ. 17:

տակակ խոշոր ցույց: Կաթողիկոսի կարգադրությամբ Խորեն վարդապետը գործուղվում է Շուշի, որտեղ ևս նրա կողմից կազմակերպվում են բողոքի ցասման բուռն ցույցեր: Շուշիից վերադառնալով Էջմիածին՝ Խորեն Մուրադբեկյանը մասնակցում է Էջմիածնում կայացած բարձր հոգևորականության ժողովին՝ եկեղեցական կալվածքների գրավման առթիվ, ապա վերադառնում Նոր Բայազետ: Նոր Բայազետի և Շուշիի ժողովրդական ցույցերը պատճառ դարձան, որպեսզի ցարական իշխանությունները երիտասարդ վարդապետին աքսորելու որոշում կայացնեն: Այդ լուրը շատ արագ տարածվում է նորբայազետցիների շրջանում և առաջացնում մեծ զայրուք ու ցասում: Խորեն Մուրադբեկյանը կտրականապես հրաժարվեց ենթարկվել աքսորի հրամանին: Միայն զավառապետ Ստեփան Աորդանյանի ջանքերի շնորհիվ է հաջողվում հանդարտեցնել ժողովրդին և խնդրել Մուրադբեկյանին ենթարկվել որոշմանը՝ հետագա անախորժություններից խուսափելու համար: Խորեն Մուրադբեկյանի Նոր Բայազետից հեռանալու ժամանակ մի քանի հազար անձից բաղկացած բազմությունը երթ էր կազմակերպել՝ սիրելի բարեկարգչին ճանապարհելու համար¹³: 1903 թ. դեկտեմբերի 15-ին կաթողիկոսական կոնդակով Մուրադբեկյանը պարզևատրվում է վարդապետական ականակուռ լանջախաչով¹⁴: Խրիմյանի կողմից դա մի յուրահատուկ մարտահրավեր էր՝ ուղղված ցարական վարչակարգին:

Մեկուկես տարի աքսորավայրում մնալուց հետո Մուրադբեկյանը վերադառնում է Էջմիածին և կաթողիկոսի 1905 թ. մարտի 16-ի կոնդակով նշանակվում Մայր Աթոռի վանական կառավարության անդամ: Այնուհետև նրան վստահվում է Գորի-

¹³ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 310, թ. 1-15:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 87, թ. 158-159:

Իմերեթի-Բաթումի և Արդվիկի առաջնորդական փոխանորդի պաշտոնը: 1906 թ. հրաժարվում է փոխանորդությունից և մեկնում է արտասահման, որտեղից վերադառնում է 1907 թ. և ստանձնում Էջմիածնի դիվանապետի պաշտոնը¹⁵:

Նորբայազետցիները, լսելով իրենց սիրելի վարդապետի վերադարձի մասին, համախոսակաևով դիմում են Խրիմյան Հայրիկին՝ խնդրելով նրան նշանակել Նոր Բայազետի և Դարաչիչակի հայոց եկեղեցիների գործակալ: Կաթողիկոսն ընդառաջում է խնդրանքին և 1907 թ. հոկտեմբերի 3-ին Խորեն Մուրադբեկյանին վերանշանակում Նոր Բայազետի շրջանի եկեղեցիների բարեկարգիչ¹⁶:

Դպրոցներ բացելու և վերաշինելու ասպարեզում Խորեն - Մուրադբեկյանի հետագա ծրագրերի մասին ուշագրավ տեղեկություններ կան 1908 թ. հունիսի 22-ին Կովկասի հայոց բարեգործական ընկերության խորհրդին ուղղված նրա նամակում: Նա տեղեկացնում էր, որ անցնող ամսում շրջագայել է գավառում և դպրոցներ բացելու վերաբերյալ բազմաթիվ համախոսականներ հավաքել: Բարվի կուլտուրական ընկերությանն առաջարկել էր դրանցից 10 խոշոր գյուղերում (Երանոս, Վալիաղալու, Ներքին Աղյաման, Ալիդրխ, Վերին Ղարանլուղ, Գյուլ, Զուլախաչ, Զաղալու, Քուլաղոան, Փաշաքենդ) դպրոցներ բացել: Նա անհրաժեշտ չէր համարում նոր դպրոցներ բացել Դալիվարդաշ, Ներքին Ղարանլուղ և Բասարգեչար գյուղերում, որտեղ պետական դպրոցներ էին գործում: Նա բարձր էր գնահատում արմատներով նորբայազետցի, Բաքվում բնակվող բարերար Տիգրան Աֆրիկյանի վաստակը, ով մեծ ջանքեր էր գործադրել հայոց գիրն ու գրականությունը հարազատ զավառում տարածելու հա-

¹⁵ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 310, թ. 1-15:

¹⁶ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1697, թ. 1:

մար. վերջինս խոստացել էր առաջիկա սեպտեմբերից իր միջոցներով դպրոցներ բացել գավառի Նորատուս և Ներքին Գյոզալդարա գյուղերում: Վերջում նա անհրաժեշտ էր համարում նոր բացվելիք գյուղական դպրոցներին հատկապես առաջին տարում դրամական նպաստ տալ¹⁷:

Վերը նշված նամակին կցված էր նաև 1907-1908 ուսումնական տարվա նորաբաց դպրոցների ցանկը՝ ուսուցիչների և սաների մասին վիճակագրական տվյալներով: Պրոֆ. Ն. Հարությունյանի հաշվումների համաձայն՝ Նոր Բայազետի գավառում խորեն վարդապետ Մուրադբեկյանի պաշտոնավարության ընթացքում՝ 1907-1908 թթ., նոր ծխական դպրոցներ են բացվել Ղուլալի, Քարվանսարա, Նորատուս, Ցամաքաբերդ, Չիբուխլու, Օրդաքլու, Քեռլադոսան, Ներքին Գյոզալդարա գյուղերում, որտեղ սովորում էր 899 աշակերտ, այդ թվում՝ 194 աղջիկ: Արդյունքում՝ ուսումնական տարում գավառում արդեն գործում էր 24 դպրոց՝ 1754 աշակերտով, այդ թվում՝ 297 աղջիկ: Ուսուցիչների թիվը 47 էր: Դա նշանակում էր, որ նշված ուսումնական տարում Նոր Բայազետի գավառում սովորում էր ընդհանուր բանկչության մոտ 1.6 %-ը: Միակն դպրոցների տարեկան մուտքային գումարը կազմել է 9272 ռուբլի, ծախսային մասը՝ 9281 ռուբլի: Հատկանշական է, որ Ռնդամալ, Չիբուխլու, Օրդաքլու, Ներքին Ախտա, իսկ 1909 թ. նաև Նորատուս, Դոմաշեն (Չիբուխլուի փոխարեն) և Ներքին Գյոզալդարա գյուղերի դպրոցները գործում էին Տ. Աֆրիկյանի միջոցներով: Բավական է նշել, որ վերջինը միայն 1909-1910 թթ. հիշյալ դպրոցների ուսումնական ծախսերի համար հատկացրել էր 2700 ռուբլի¹⁸:

¹⁷ Հարությունյան Ն., նշվ. աշխ., էջ 253-254:

¹⁸ Նույն տեղում, էջ 255:

1908 թ. հոկտեմբերի 5-ին Նոր Բայազետի հայ ազգաբնակչությունը, ոգևորված վարդապետի ձեռնարկումներով, գավառապետ Ստեփան Ղորղանյանի գլխավորությամբ մի համախոսական է ուղարկում կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Մուրեյանցին, որով առաջարկվում էր Տ. Խորեն Մուրադբեկյանին նշանակել Երևանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ¹⁹:

1909 թ. փետրվարի 1-ին Երևանի թեմի պատգամավորական ընդհանուր ժողովը ձայների մեծամասնությամբ Խորեն Մուրադբեկյանին ընտրում է թեմի առաջնորդական փոխանորդ²⁰: Սակայն ցարական կառավարությունը չի հաստատում այդ ընտրությունը: Հետագայում Կովկասի փոխարքայի համաձայնությամբ Մուրադբեկյանը կարգվում է Երևանի հայրապետական թեմի փոխթեմակալ²¹: Ստանձնելով այս պատասխանատու պաշտոնը՝ Տ. Խորեն Մուրադբեկյանի համար բացվում է գործունեության լայն ասպարեզ, որը միտված պիտի լիներ թեմի առջև ծառայած բազմաբնույթ խնդիրների լուծմանը:

Այսպիսով՝ Խորեն վարդապետ Մուրադբեկյանը խորապես գիտակցելով իր առաքելության իմաստը՝ 20-րդ դարի առաջին տասնամյակում իր կարևոր նպաստը բերեց Նոր Բայազետի գավառի բնակչության ինչպես հոգևոր, այնպես էլ կրթական մակարդակի բարձրացմանը: Նա ոչ միայն Հայ առաքելական եկեղեցու նվիրյալ բարեկարգիչ էր, այլև կրթության և մշակույթի անձնուրաց մշակ:

¹⁹ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 177, թ. 14:

²⁰ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 202, թ. 4:

²¹ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, Գիրք Բ, էջ 13:

ХОРЕН МУРАДБЕКЯН–БЛАГОСТРОИТЕЛЬ ЦЕРКВЕЙ НОР
БАЯЗЕТА В 1901-1909 ГГ.

РЕЗЮМЕ

С 1901 по 1909 гг. Хорен Мурадбекян дважды был избран на должность благостроителя церквей провинции Нор Баязет. В течении этих лет он пытался изменить культурно- образовательную жизнь местных армян, находящихся во тьме невежства. Несмотря на царящие политические, экономические и финансовые преграды Мурадбекян основал новые школы и церкви.

QANAQARA HAYRAPETYAN

KHOREN MOURADBEKYAN: A REFORMER OF THE CONDITION
OF THE CHURCHES IN NOR
BAYAZET REGION IN 1901-1909

SUMMARY

From 1901 to 1909 Khoren Muradbekyan, being the reformer of churches in Nor Bayazet Region, discarding all political, economic and financial obstacles and applying the potential of Nor Bayazet inhabitants, made an attempt on reforming educational and cultural life of local inhabitants fumbling in the dark and illiteracy through founding new schools and churches. As G. Bishop Chorekchyan once mentioned, "Writing about His Holiness Catholicos of All Armenians means the same as giving a whole description of national, social, religious, educational and school events of a definite historical period".